Մոյթերը ուղղանկիւն էին և հաստատուած չորս սիւներով. միևնոյն յատակագծով կիսամոյթեր կողմնաթևերուն պատերուն կը յենուին։ Չեմ կրնար գիտնալ թէ այս խիստ թանձր պատերը որմայեցեր (contreforts) ունէի՞ն։ Ռեմլէի և Թորթոզի նման, մոյթերը ունէին խոյակներ, բայց ասոնք իրենց զարդերովը աւելի կարճ էին նմանօրինակ յիշատակարանաց մէջ գտնուածներէն։

Այս խոյակները ունէին խոյօղեր (volutes) և երկկարգ կարճ պարզ տերևներ, կորածայր ձևով։ Անոնք չունէին ոչ կոճղիղաւոր զամբղաձև զարդ և ոչ ալ փորածոյ թակաղաղ։ Հիւսիսային կողմնաթևը զետեղուած սիւն մը կէս բարձրութեամբը կտրուած էր, ինչպէս Թորթոզի եկեղեցիին մէջ։ Կողմնաթևերու պատուհաններուն և մեծ կողակին բարձր պատուհանին յենարանին տակէն անցնող և սիւնաչարքերուն ու կողակներուն մոյթը կազմող շարունակական լարով մը բոլոր թակաղաղները կապուած էին։ Ինչպէս Ռեմլէի և Գազայի եկեղեցիներուն մէջ, յենարաններու երկրորդ կարգ մը կար նաւին և գլխաւոր կողակին մէջ եւ կը պսակուէր շարունակական երկրորդ լարով մը։ Այս հորիզոնական ցցուածներու կտրածը (profil), ինչպէս Թորթոզի եկեղեցիին մէջ, միակերպօրէն բաղկացած է տեսակ մը հակադարձ ատտիկայարկէ (attique), բայց հոս կտրածը, ինչպէս խոյակները, աւելի ծանր են քան Թորթոզի եկեղեցիին մէջ, ինչ որ կը հաստատէ այս վերջին եկեղեցիին աւելի յառաջացեալ թուականը։

Պարոն Taylor տեսած է նաև վանական շէնքերու մնացորդներ, զոր կը նկարագրէ այսպէս.

«Խաչակիրներու թուականին ուրիշ շէնք մը՝ որ կը կապէ եկեղեցին հարաւի կողմէն, կը թուի ըլլալ հին վանք մը։ Հո՛ն կը տեսնուի պատին մէջ ագուցուած տապանաքար մը և որուն զարդարանքը կը ներկայացնէ խիստ գեղեցիկ փոքր կամարներու յօրինուած մը»։

Այս հեղինակաւոր տողերը բաւական են հաստատելու թէ այս եկեղեցին Խաչակրաց յատուկ հիմնարկութիւն մը չէր, այլ հինէն մնացած Մայր Տաճար մը, գեղեցիկ ճարտարապետութեամբ շինուած։ Խաչակիրք պատրաստ կը գտնեն զայն և կը կատարեն նորոգութիւններ համաձայն իրենց ճաշակին։

Տարակոյս չկայ որ 1187ին, Խաչակրաց վերջնական մեկնումէն յետոյ, մերայինք դարձեալ տիրացան Էլ-Պիրէհի եկեղեցւոյն,